

## ՀԱՅԵՐԸ ՄԱԴՐԱՍՈՒՄ

Ռ. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Հնդկաստանի Արևելյան շրջանի հարավի ծովափնյա սուկտրաշահ կենտրոնների հետ աշխարհաշրջիկ հայ վաճառականները կապեր ունեին վաղնջական ժամանակներից:

Հստ մեզ հասած հավաստի մի տեղեկության, հայազգի մի վաճառական՝ Քովմա Գանա անունով, ցամաքային ճանապարհով հասել է Հնդկաստանի Մալաբարյան (Ներկայիս Մալաբարի) շրջանները, Գուլոնդայի կառավարիչ Շիո Ռամից ստացել է ապրելու և առևտրով զբաղվելու թույլտվություն: Որոշ ժամանակ անց Քովմա Գանան ստանալով Շիո Ռամի բարեհաճ թույլտվությունը, սկսել է այստեղ քրիստոնեություն քարոզել, կառուցել եկեղեցիներ, հիմնել դպրոցներ:

Ե՞րբ է Քովմա Գանան հասել Հնդկաստանի Մալաբարյան ծովափի շրջանները:

Հարցին առաջիններից մեկն անդրադարձել է Մեսրոպ Սեթը: Օգտվելով հնդկական ու եվրոպական աղբյուրներից՝ Սեթը գրում է. «Վասուկ դա Գամայի Հնդկաստանի ափերն իջնելուց (1498 թ.) յոթ դար առաջ, ավելի ստույգ՝ 780 թ., ձեռներեց մի հայ վաճառական՝ Քովմա Գանա անունով. հասավ Մալաբարի այս ափերը, երբ տեղի կառավարիչն էր Շիո Ռամ անունով մեկը: Հայ վաճառականը վեջինիս կողմից արժանացավ մեծ պատիվների:

Գանան գործվածքեղենի և համեմունքի վաճառքից հսկայական հարստություն դիզեց և ունենալով Շիո Ռամի հովանավորությունը՝ սկսեց քրիստոնեություն քարոզել Հնդկաստանի այս շրջանում»<sup>1</sup>:

Պորտուգալացի կաթոլիկ քարոզիչ Ալվարո Պենտիագոն 1515 թ. Պորտուգալիայի թագավորին գրած իր մի նամակում հայտնում է. «Սուրբ Քովմային հետևող այս տեղերում հանդիպող հավատացյալների մասին պատմում են հետևյալը. «Մի հայ վաճառական, որն ութերորդ դարի վերջերին հասել է այստեղ և ոչ մի հույս չունենալով, որ այլևս կարող է վերադառնալ հայրենիք, մշտական բնակություն է հաստատել Մալաբարում, ամուսնացել և բազմաթիվ երեխաներ է ունեցել: Այս հայ վաճառականն էլ հենց հանդիսացել է քրիստոնեություն քարոզողը Մալաբարում»<sup>2</sup>:

Խոսելով Քովմա Գանայի մասին՝ XVI դարի քրիստոնյա քարոզիչներ Գասպար Կայետան և Ֆրանցիսկո Սուզան նույնպես հավաստում են, որ ըստ իրենց լսածի, Մալաբարի ծովափնյա շրջաններում քրիստոնեության առաջին քարոզողը հայազգի վաճառական Քովմա Գանան է եղել»<sup>3</sup>:

Մեկ այլ կաթոլիկ քարոզիչ՝ հայր Ալվարես Սեմեդան, որը հայտնի է Հնդկաստանում և Չինաստանում կատարած քրիստոնեության քարոզչությանը, Հեռավոր Արևելքում քրիստոնեության տարածմանը նվիրված իր գրառումներում անդրադառնալով Քովմա Գանային, գրում է. «Նա հասնելով Հնդկաստանի Մալաբարի շրջանը, ուր սուրբ Քովման հասցրել էր հավատքի շահը, որը մարած էր մոտավորապես 800 թվականին, նորից վառեց:

Փաթանայի շրջանում մի հայ վերականգնեց հին քրիստոնյա կրոնը, վերակառուցեց սուրբ Առաքյալի կառուցած ավերված եկեղեցիները, բարձրացրեց խորաններ, մի բան, որն անունների զուգադիպության պատճառով առիթ է տվել կարծելու, որ այդ շինություններն իր նախորդի՝ սուրբ Քովմայի գործերն են»<sup>4</sup>:

Անդրադառնալով Քովմա Գանային՝ հայր Ֆրանցիսկո դե Սուզան գրում է. «Այս հայը հաստատվելով Մալաբարում ընտանիք կազմեց, բազմաթիվ զավակներ ունեցավ..., որոնք

<sup>1</sup> M. J. Seth. History of the Armenians in India, Calcutta, 1895, p. 22.

<sup>2</sup> Ռաբրու Կյուպսենկյան, Հնդկահայերի պատմությունից, Երևան, 1973, էջ 16:

<sup>3</sup> Anni Basill, Armenian Settlements in India, Calcutta, 1909, p. 51.

<sup>4</sup> Ռաբրու Կյուպսենկյան, նշվ. աշխ., էջ 17:

ապրում էին Կարանագաթում, Կատուրում, Կոտիզում և այլուր: Նրա զավակները մեծ շահով այս վայրերում տարածեցին քրիստոնյա հավատքը<sup>5</sup>:

Յվրոպացի ուսումնասիրողներ Գ. Գիրբոնը<sup>6</sup> և Ա. Անվիելը<sup>7</sup>, խոսելով Հնդկաստանում քրիստոնեության տարածման մասին, նշել են, որ Հնդկաստանում քրիստոնեություն տարածող առաջին քարոզիչներից, ավելի ճիշտ՝ քրիստոնեության վերականգնողներից առաջինն է եղել «հայազգի Թովմա Գանան»: Մեկ այլ ուսումնասիրող՝ Ռ. Քոլինզը, նշում է, որ Թովմա Գանան, եղեսացի հայ է և Հնդկաստան է եկել Վասկո դա Գամայից 800 տարի առաջ, շեշտելով, որ նա Հնդկաստան հասած առաջին ամենից նշանավոր օտարազգի գործիչն է<sup>8</sup>:

Թովմա Գանայի՝ որպես VIII դ.՝ Հնդկաստանում ապրած և գործած հայ գործիչ մասին խոսել են նաև հայ ուսումնասիրողներ Հ. Գ. Ազոնցը<sup>9</sup>, Ղ. Ալիշանը<sup>10</sup>, Ա. Ալպոյաճյանը<sup>11</sup>, Ք. Գուշակյանը<sup>12</sup> և Ա. Բազիլը<sup>13</sup>:

Դոմինիկյան միաբանության անդամ Գասպար դա Կրուելի՝ 1569 թ. գրած մի տրակտատում տեղեկություն կա, որ Հայաստանում ոչ միայն գիտեին իրենց հայրենակցի Հնդկաստանում կատարած քարոզչության մասին, այլև ուխտի էին գալիս Մալաբար. «Երբ ես այս վայրերում էի գտնվում (այստեղ Ս. Թովմա առաքյալը նահատակվել էր), ես տեղացիներից իմացա, որ այստեղ ուխտագնացության էր եկել մի հարգարժան հայ»<sup>14</sup>:

Վերջերս Ս. Թովմայի՝ քրիստոնյա համայնքին նվիրված նոր ուսումնասիրություն է հրատարակվել, որտեղ հետաքրքիր նոր փաստեր կան Մադրասի շրջանի հայկական հին համայնքների մասին: Հոլանդացի ուսումնասիրող Հերման դ'Սուտան «Արբաձայր լեռան վրա» աշխատության մեջ, որը նվիրված է Մալաբարի շրջանի քրիստոնյա հին կառույցներին, գրում է. «Ս. Թովմայի լեռան վրայի ավերակները գրգռում էին պորտուգալացի կրոնավորների հետաքրքրությունը: Այդ ավերակների պեղումները գիտնականներին բերեցին այն եզրակացությունը, որ դրանք հայկական հին եկեղեցու ավերակներ են՝ կառուցված 530 թվականին: Մնչպես երևում է, հայերը երկար ժամանակ են տիրապետել այդ սրբավայրերին»<sup>15</sup>:

Թե ինչ հիմք ունի ուսումնասիրողը հիշյալ հայկական կառույցը 530 թվականի համարելու, դժբախտաբար մեզ հայտնի չէ: Հավանաբար հնագետներին հայտնի է եղել ինչ-որ արձանագրություն, այլ կերպ հազիվ թե բերվեր այս եկեղեցու կառուցման կոնկրետ թվականը: Այստեղից էլ պետք է անել այն հավանական եզրակացությունը, որ Մալաբարյան ժողովրդի հայերը հաստատվել են Թովմա Գանայից շատ ավելի վաղ ժամանակներում՝ առնվազն VI դարում:

Մադրասում և նրա ծովափնյա շրջաններում հայություն լինելու մասին հաջորդ դարերում քիչ բան գիտենք: Սկսած 1500-ական թթ. սկզբից Չինի Փաթանում (հին Մադրաս), Մալաբարում, Ս. Թովմայում և նրանց շրջակայքում հայկական համայնքների մասին, որոնք Գուկոնդայի տնտեսական կյանքում նշանակալից դեր էին խաղում, փաստերն արդեն շատ են:

Այդ տեղեկություններից առաջիններից մեկը հետևյալն է: 1507 թ. Գոայում հաստատված Պորտուգալիայի փոխարքան տեղեկանալով, որ Հնդկաստանի արևելյան ափերին քրիստոնյա հայեր են ապրում, մարդիկ է ուղարկում պարզելու նրանց ով լինելը<sup>16</sup>: Այս փաստը հաղորդող Հ. դ'Ալվիսն հայտնում է մեզ համար մեկ այլ հետաքրքիր տեղեկություն: 1513 թ. պորտուգալացի երկու ճանապարհորդներ՝ Դիեգո և Բատիստա Ֆերնանդեսները, լսելով, որ Չինի Փաթանում հայեր են ապրում, զենում են նրանց մոտ և իրենց համար շահավետ տեղեկություններ քաղում շրջապատի քրիստոնյաների մասին:

1515 թ. հունվարի 6-ին Մալաբարից Անդրե Կորսալին ուղղված մի նամակում կարդում ենք. «... Մալաբարի մարդիկ բոլորն էլ բարի են, նրանք ունեն մի քանի գեղեցիկ եկեղեցի

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> E. Gibon, The Decline and Fall of Roman Empire, London, 1915, vol. V, p. 54, 55.

<sup>7</sup> A. A. Anviele, Ediries Smont sut India, London, 1890, p. 125.

<sup>8</sup> R. Collins, Missionery, Activity in India, London, 1908, p. 96.

<sup>9</sup> Հ. Գ. Ազոնց, Աշխարհագրութիւն լորից մեծանց աշխարհի, հ. Գ, Վենետիկ, 1806, էջ 119:

<sup>10</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, էջ 466:

<sup>11</sup> Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Ա, Գահիրե, 1941, էջ 198:

<sup>12</sup> Ք. Գուշակյան, Հնդկահայք, Ծրուսաղեմ, 1941, էջ 48: Տե՛ս նաև նրա հոդվածը, «Կուշակ Հայաստանի», Նյու-Յորք, 1929, № 9:

<sup>13</sup> Anni Basill, նշվ. աշխ., էջ 52:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Herman D'Sura, The top of st. Thomas in Modern Madras, Madras, 1883, p. 52,

<sup>16</sup> H. Lovie, The vestiges of old Madras, London, 1880, vol. I, p. 272.

... եկեղեցիներում սպասավորում են հայերը, որոնք վաղուց են հաստատված Հնդկաստանում:

1517 թ. սեպտեմբերի 18-ին թվագրված մի այլ նամակում, որն ուղղված է իշխան զբ Մեգիլիսին, այս անգամ ինքը՝ Անդրե Կորսալը, գրում է. «Ինչ վերաբերում է ինձ, ես որոշեցի տեղի իմ բարեկամ մի քանի հայերի հետ շրջագայել ծովափնյա շրջանները և ուշի ուշով ուսումնասիրել տեղի կյանքը»<sup>17</sup>:

Քսանհինգ տարի (1594—1619 թթ.) Հնդկաստանում սարած Սեբաստիան Ֆերնանդեսը, որն ուսումնասիրել է Մալբարի կյանքը, շատ հավանական է համարում, որ պորտուգալացիներից ավելի վաղ քրիստոնյա հայեր են ապրել Մալբարում, որոնք զբաղվել են առևտրով<sup>18</sup>: 1535 թ. Պորտուգալիայի թագավոր Զոառ 3-րդին Ս. Թովմայի շրջանից ուղարկված մի նամակում հեղինակը հայտնում է ամուսնացած և Մալբարում բնտանիքներ կազմած մի խումբ հայերի մասին<sup>19</sup>:

Անգլիացի ուսումնասիրող Զ. Քեյը Հնդկաստանի քրիստոնյաներին նվիրած իր մի ուսումնասիրության մեջ նույնպես խոսում է Մալբարում, Չինի Փաթանում (հին Մադրասում), Ս. Թովմայի շրջանում XVI դարում բավականին կազմավորված հայկական համայնքների մասին: Մեկ այլ ուսումնասիրող, Նշանավոր Ֆ. Մարտենը, որը երկար ժամանակ ապրել է Մալբարում և մանրամասն ուսումնասիրել է պատմական հուշարձանները, գրում է. «Հայերը Ս. Թովմայում են նրա հիմնադրման ժամանակներից սկսած, հիմնականում զբաղվելով առևտրով... պորտուգալացիների գալուց հետո միասին կառուցեցին հույակապ այս քաղաքը (Մադրաս—Ռ. Ա.)... հավատացնում եմ, որ այստեղ կան հայ բնտանիքներ, որոնք ունեցվածքի արժեքն անցնում է միլիոններից»<sup>20</sup>:

1550—1650-ական թվականների Մալբարի շրջանի հայկական գաղթօջախների մասին են խոսում պահպանված բազմաթիվ շիրմաքարերը: Ծիշտ է, նրանց մի մասի վրա թեև չկան ներշնչայի անուկ-ազգանունը, բայց նրանց վրա կան «հայ», «հայազգի», «խոջա» բառերը, որոնք անտարակիչ խոսում են այն մասին, որ ներշնչայնները հայեր են եղել:

Պորտուգալացիները Ս. Թովմայի լեռան վրա և նրա շրջակայքում հոգևոր առաջին կառույցները սկսել են 1529 թվականից:

Խոսելով այս մասին՝ Հերման դ'Սուտան գրում է. «Երբ պորտուգալացիները այս վայրերը եկան, ոչ մի կանգուն կառույց չկար: Մի տեղ միայն կային մոտ կես մետր բարձրության պատեր: Ավերակը քրիստոնյա մատուռի մնացորդ էր հիշեցնում, որտեղ տեղավորվել կարող էին միայն մի քանի մարդ:

Այս հիմքերի վրա 1547 թ. կառուցվել է նոր եկեղեցի»<sup>21</sup>:

Ս. Թովմայի փոխերեց Գասպար Բոլիոն հատնում է, որ պորտուգալացիների կառուցած այս եկեղեցին «ընդարձակել և բարենորոգել է հայազգի խոջա Սաֆարը»: Խոջա Սաֆարը հայտնի է Մալբարի տարածքում և Մադրասում մի շարք կառույցների ֆինանսավորմամբ: Մեկ այլ հայ խոջա կառուցել է եկեղեցու բնմը 1707 թ.: Ժամանակակիցները վկայում են, որ եկեղեցու սեղանի վրա կար Ս. Թովմայի նկարը, որի տակ՝ Պետրոս Ոսկանի անունը՝ որպես նվիրատու<sup>22</sup>:

Այս եկեղեցում եղել է հայկական ոճով պատրաստված քարոգիտի ամբիոն, որը Հ. Սուռայի վկայությամբ «հասել է մեր օրերը և շնայած իր հնությանը, հայկական արվեստի գլուխգործոց է: Ամբիոնի ներքևի մասում կա այն պատրաստելու թվականը և նվիրատու խոջա Պետրոս Ոսկանի անունը»<sup>23</sup>: Եկեղեցու պատին պահպանված մի արձանագրությունից երևում է, որ եկեղեցու կառուցման և բարենորոգման աշխատանքներ կատարողներից մեկը հայազգի խոջա Սաֆարն է եղել<sup>24</sup>:

Հետաքրքիր է, որ բլրի գագաթին կառուցված է եղել փարոս, որն ուղղություն էր տալիս Մադրաս եկող նավերին:

Մալբարյան ծովափի Մադրասի շրջանում XVI դարից սկսած հայկական համայնքների գոյության փաստը հաստատում են մի քանի ուրիշ աղբյուրներ: Հիսուսյան միաբանության անդամ հայր Գևորգ Շոտհամբը իր «Հայ եպիսկոպոսները Մալբարում» հոդվածում պորտուգալական աղբյուրներից բերել է երկու հետաքրքիր նամակ՝ գրված Հնդկաստանից, որոնք

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 272:

<sup>18</sup> Տե՛ս Ռ. Կյուլպենկյան, նշվ. աշխ., էջ 19:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>20</sup> J. W. Kay, Christianity in old Madras, London, 1895, p. 10.

<sup>21</sup> H. D'Sura, In the Steps of st. Thomas, Modern Madras, Madras, 1983, p. 52.

<sup>22</sup> Տե՛ս H. D'Sura, նշվ. աշխ., էջ 52:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 53:

հավաստում են, որ իրոք XVI դարի կեսերին հայկական համայնքներ կային հաստատված այսօրվա Մաղրասի տարածքում: Այդ նամակներից մեկը գրված է կաթուղիկ քարոզիչ Ֆրանսիս Քվադրիեի կողմից Պորտուգալիայի թագավոր Ժուան Երրորդին 1549 թ. հունվար 26-ին, որում ասված է, որ «Հայաստանցի մի եպիսկոպոս՝ Զակոմի Արոնս անունով, մի շատ ծեր, առաքինի ու սուրբ մարդ, այս երկրում քառասունհինգ տարի է, որ ծառայում է Աստծուն, Ձերդ մեծութանը»<sup>26</sup>: Այս փաստի հրապարակումից հետո կասկած հայտնվեց, որ այստեղ հազիվ թե խոսքը վերաբերում է հայի կամ հավաստում է նրա ղեկավարության տակ եղած հայկական համայնքի մասին:

Գ. Շոտհամբրի հոդվածի հրատարակումից կարճ ժամանակ անց լույս տեսավ քանասեր Ռ. Կյուլպենկյանի «Լեղհահայերի պատմությունից» ուսումնասիրությունը, որը նվիրված է 1505—1555 թթ. Մալաբարում գործած հայկական համայնքին: Ռ. Կյուլպենկյանին պորտուգալական արխիվներից հաջողվել է հայտնաբերել մի շարք նոր, հետաքրքիր վավերագրեր, որոնք անառարկելիորեն ապացուցում են, որ իրոք XVI դ. առաջին կեսերին այսօրվա Մաղրասի տարածքում եղել է հայկական գաղթօջախ՝ «Հակոբ անունով, ծնունդով տարոնեցի, իր հոգևոր առաջնորդով, որը միաժամանակ Մալաբարի բոլոր քրիստոնյաների առաջնորդն էր»<sup>26</sup>:

Ռ. Կյուլպենկյանի հայտնաբերած մեկ այլ նամակում՝ գրված 1515 թ. հունվարի 6-ին Ժուլիոս Մեդիչիսին Կոչին քաղաքից, նշված է, որ «Մալաբարի բոլոր մարդիկ բարի են, որոնք մասին վկայում են գեղեցիկ եկեղեցիները... Եկեղեցիներում սպասարկում են հայերը, որոնք վաղուց են հաստատված Լեղհաստանում»<sup>27</sup>:

Սերասոյան Ֆերնանդեսը, որը 1594—1619 թթ. ապրել է Լեղհաստանում, հավաստում է, որ ուսումնասիրությունները ցույց են տվել՝ «Նախքան պորտուգալացիների գալը Մաղրասի շրջանում առևտրի նպատակով հաստատված հայեր են եղել»<sup>28</sup>:

1525 թ. դեկտեմբերի 27-ին Մալաբարի շրջանից Պորտուգալիայի թագավորին տեղի բերանակոթյան ուղարկած մի նամակում կարդում ենք. «Ընդհանրապես այստեղ ապրում ենք վաթսուներկու մեր կանանցով և երեխաներով: Այստեղ կան նաև ամուսնացած քրիստոնյա հայեր»<sup>29</sup>:

XVI դ. կեսերին Մաղրասում հայկական հաստատուն գաղթօջախի անհերքելի ապացույց է Ս. Քովմալի բլրի վրա կառուցված հայկական եկեղեցին: Թեպետ այդ կառույցը չի պահպանվել, բայց բարեբախտաբար պահպանվել է այդ եկեղեցու կառուցման թվագրված արձանագրությունը՝ 1547 թ.<sup>30</sup>:

Մաղրասի հայկական հին գաղթօջախի մասին ամենից խոսուն փաստը հետևյալն է. Մալաբարի շրջանում XVII դ. կեսերին անօրինություն անող պորտուգալացիների կառավարումը հանգեցրեց Գոլիկոնյայի տնտեսության քայքայմանը: Երկրի կառավարիչ Արդուլլահ Քութաբ շահը 20 հազարանոց բանակով շրջապատեց Մալաբարի պորտուգալական ֆակտորիաները, ավերեց դրանք և պորտուգալացիներին դուրս մղեց Լեղհաստանի այլ տարածքից: Սա փաստորեն հնդիկ ժողովրդի հակապորտուգալիան առաջին ելույթներից էր:

Մալաբարի տնտեսական և քաղաքական կյանքը վերականգնելու համար Արդուլլահ Քութաբը նշանակեց հայազգի Մարկոս Խուզադին: Հասկանալի է, որ հայկական համայնքը և Մարկոս Խուզադը պետք է որ շատ մեծ հարգանք վայելած լինեին տեղի բնակչության և կառավարող վերնախավի շրջանում, որ հայ մարդուն վստահվոր Լեղհաստանի մի խոշոր նահանգի մասնավարի: Թե ինչքան ժամանակ է կառավարել Մալաբարը նրա «հայազգի գուբերնատորը», ինչպես նրան անվանում են ազբյուրները, չգիտենք, հայտնի է միայն, որ նա կառավարել սկսել է 1662 թվականից: Հայտնի է նաև, որ 1698 թվականին շարունակում էր մնալ այդ պաշտոնում:

Լոնդոնի Բրիտանական թանգարանում պահվում է Մալաբարի հայազգի նահանգապետի պորտուգալերեն գրած մի նամակը Անգլիայի թագավոր Կարլոս Բ-ին: Նամակը հայտնաբերած Ստ. վարդապետ Գրիգորյանը թարգմանաբար հրատարակել է այն, ուր ասված է. «Հայքելով զՏոմանաղործիլն և պաշտպանութիւն Ձեր, առաքեմ Ձեզ մեծաքանակ կապոյտ զհասրակ, մատանի մէկ այլ, կապոյտ զհասրակ, մատանի մի ևս կարմիր հակինթով... և մի քանի այլ ծանրագոյն մեծարժէք գարդեր»<sup>31</sup>:

<sup>26</sup> Ռ. Կյուլպենկյան, Զակոմի Արոնս հայ եպիսկոպոսը Մալաբարում (1503—1550) (ըստ պորտուգալական ժամանակակից ազբյուրների), Երևան, 1973, էջ 9:

<sup>27</sup> Ռ. Կյուլպենկյան, նշվ. աշխ., էջ 19:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 19—20:

<sup>29</sup> R. Colins, Missionary in India, London, 1899, p. 119.

<sup>30</sup> J. Kay, Christians in India, London, 1898, p. 10.

<sup>31</sup> «Բազմավէպ», 1922, էջ 45:

<sup>32</sup> Նույն տեղում:

Անգլիայի թագավորին (խոսքը Կարլոս Բ-ի 1660—1665 թթ. մասին է) հայտնելով այս ամենը, Մարկոս Խուզազը նրան տեղյակ է պահում. «Եւ որովհետև զործ նաւարկութեան ըստ ամենայնի դժուարին է յայտոսիկ կողմանս, աղերսեմ առ Վեհափառութեան Ձերոյ պարգև զնաւ մի, որով ծառայք ծառայի Վեհափառութեան Ձերոյ նաւորդելով ի մասունս Արևելքի շահեցնց զիրս պատուականս»<sup>32</sup>:

1664 թ. փետրվարի 4-ին գրված նամակը ստորագրված է. «Վեհափառութեան Ձերում խնարհ և հուատարիմ ծառայ, ըստ հայերէն Մարկոս Ըռազազ»: «Մարկոս Ըռազազ» բառերը գրված են հայերեն տառերով:

Ինչպես երևում է նույն թանգարանում պահվող մեկ այլ վավերագրից, «Գրութիւն Մարկոս Ըռազազի» թարգմանվել է անգլերեն և նվերներին հետ միասին հանձնվել Անգլիայի թագավորին: Թե ինչ եղավ հետագայում, այլևս ոչինչ չգիտենք:

Մալբարիի հայագրի կառավարիչի մասին մեզ է հասել մեկ այլ հետաքրքիր հավաստի փաստ ևս: Դա Բրիտանական թանգարանում պահվող հայերեն մի ձեռագիր հիշատակարան է, ուր կարդում ենք. «Արդ գրեցաւ փոքր քաղաք, որ կոչի Չինի Փաթոն և օթևան իմ Ըսպահան: Արդ եղև թուին փոքր նաղար ամսի ԻՍ-ումն, 1698 թ. և իշխող տեղոս էր պարոն Ղոզազն և հուշակ մեծամեծաց և խօսակից թագաւորաց և պարծանք քրիստոնէից»<sup>33</sup>:

Ս. Թովմայի բլրի վրա կատարված կառույցներում XVІІ դ. վերջում XVІІІ դ. սկզբներին այնքան էլ մեծ եղել Մաղղասում ապրող խոշա Զաքարի դերը, որ 1726 թ. նա թաղվել է բլրի գագաթին կառուցած Ս. Կույսի եկեղեցում<sup>34</sup>: Նրա պատվին հայերեն և պորտուգալերեն լեզուներով արձանագրութիւն էր փակցված եկեղեցու պատին: Արձանագրութիւն մեջ ասված էր, որ եկեղեցու գավիթը և դուռը կառուցված է խոշա Զաքարի նվիրարերած դրամով<sup>35</sup>: Եկեղեցում կա նաև մեկ այլ հայ վաճառականի՝ խոշա Գրիգոր Երևանցու գերեզմանը<sup>36</sup>:

Այս եկեղեցու գավթում են թաղված նաև Շահամիր Շահամիրյանի քույրը և մայրը՝ Աննա խաթունը: Ս. Կույսի եկեղեցու խորանում կա մի խաչ, որն ունի «Ոսկանի որդի Ոսկանի հիշատակին» հայերեն արձանագրութիւնը<sup>37</sup>: Բեմի փայտյա կառույցն ունի դարձյալ հայերեն «Ազա Ալավերդի Սարգսի որդի յիշատակին—1721 թվական» հայերեն գրութիւնը<sup>38</sup>:

Եկեղեցում կան նաև Քրիստոսի տաններու առաջալսների նկարները, որոնց անունները գրված են հայերեն: Ուսումնասիրողները դրանք համարում են «հայկական նկարներ»<sup>39</sup>: Կան «փայտի վրա հայկական ոճով կատարած կույս Մարիամը մանուկ Քրիստոսը գրկին նկարը»: Այս բոլորը խոսում են այն մասին, որ այս եկեղեցին պատկանելիս է եղել հայերին, կամ հայերն այստեղ ժամերգութիւն արտոնութիւն են ունեցել:

Սա բոլորը չէ: Դեպի Ս. Թովմայի բլուրը տանող մայրուղու հարավային ծայրում Ս. Ռիտայի անունը կրող եկեղեցու արևելյան պատին փակցված քարե մի տախտակի վրա արձանագրութիւն կա, որը հավաստում է, որ եկեղեցին կառուցվել է 1729 թվականին, ի պատիվ հայ ազգի: Այս եկեղեցում կա մեկ այլ արձանագրութիւն, որի մեջ ասված է. «Հայերը շատ վաղուց են պահպանել սրբի գերեզմանը և պորտուգալացիները հետևել են նրանց 1517 թվից հետո միայն»<sup>40</sup>:

1664 թ. ֆրանսիական արևելահնդկական առևտրական ընկերութիւնը կազմեց մի նավախումբ և առևտրի հնարավորութիւնները Մալբարիի ծովեզրյա շրջաններում հետախուզելու նպատակով ուղարկեց Հնդկաստանի այս ափերը: Նավախումբը ղեկավարում էր նշանավոր նավավար Գառն: Հասնելով Մալբարիի ծովափնյա շրջանները՝ ծովակալը տեղի կառավարիչների հետ բանակցութիւններ վարելը վստահեց տեղական վերնախափին ծանոթ, լեզուների տիրապետող, Մալբարում ճանաչված վաճառական Մարգար Ավալնցուն: Պատվիրակութիւնը հաջողութիւնով կատարեց իր վրա դրած խնդիրը: Ֆրանսիական վաճառականներն իրավունք ստացան

<sup>32</sup> Մալբարիի հայագրի կառավարիչի՝ պորտուգալերեն գրված նամակը Բրիտանական թանգարանի արխիվում հայտնաբերել և թարգմանել է Ստեփան վ. Գրիգորյանը, տե՛ս Ստ. վ. Գրիգորյան, Հայք ի Հարավային Հնդկաստան, «Բազմավէպ», 1922, էջ 144—147:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 146:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 146—147:

<sup>35</sup> A. Bassil, նշվ. աշխ., էջ 51:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 52—53:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 53—54:

ոչ միայն ծովափին, այլ նաև Գոլկոնդայի խորքերում, մինչև Մաշուլի Փոթանում ազատ առևտուր անելու<sup>41</sup>:

Սեն Մարտենը, որը 1672—1674 թթ. սուրբ է Մալբարում և ուսումնասիրել է տեղի հրեա-նությունները, նույնպես հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Մադրասում ապրած հին հայերի մասին: «Հավաստոք հաստատված է, որ Սեն Քոմայի այստեղ հիմնավորվելու առաջին իսկ օրերից շատ հայեր էին մշտական բնակություն հաստատել այս տեղերում և զբաղվում էին առևտրով: Երբ պորտուգալացիները եկան, նրանք միացան վաղուց այս տեղերի մեջ հաստատված հայերի հետ և համատեղ ուժերով կառուցեցին քաղաքը: Հավաստում են, որ այս տեղերում կային հայ ընտանիքներ, որոնք միլիոններից անցնող հարստություն ունեին»<sup>42</sup>: Հենվելով Սեն Մարտենի հաղորդած այս տեղեկության վրա, Ս. Գրիգորյանը գրում է: «Ուրեմն հավաստի է, որ XVI դ. առաջին քառորդին արդեն նշանավոր մասն կկազմեին Մալբարի բնակչության ի միջի բարգավաճության և բարի հաջողության»<sup>43</sup>:

Մադրասի հին հայ բնակչության թվի մասին կոնկրետ տեղեկություն չունենք, միայն Ս. Սեթին հայտնի է եղել մի հայերեն ձեռագիր՝ գրված 1688 թ. Մադրասում, որի հիշատակարանում ասվում է, որ ձեռագիրը գրելու ժամանակ Մադրասի հայկական համայնքը բազմամարդ էր<sup>44</sup>: Որ իրօք XVІІІ դ. սկզբին Մադրասում կար բազմամարդ հայկական համայնք, հավաստում է այն փաստը, որ Մադրասում և նրա շրջակայքում 1707, 1712 և 1729 թթ. կառուցվել են հայկական եկեղեցիներ:

Հնդկահայերը, մասնավորապես Մադրասի հայերը, մշտապես երախտապարտ են եղել իրենց նկատմամբ հոգատարություն ցուցաբերած հնդիկների նկատմամբ: 1726 թ. Պետրոս Ոսկանի գլխավորությամբ հայերը հավաքել են 30.000 հուն (հունը այն ժամանակ հավասար էր 3—8 ռուպյախի) և Մադրասի միջով հոսող Ադիար գետի վրա կառուցել են բազմակամար մի կամուրջ՝ հայերեն և պարսկերեն արձանագրությամբ, որը հավաստում է, որ այն կառուցել են հայերը<sup>45</sup>: Կամուրջն առայսօր կանգուն է և պետության կողմից պահպանվում է որպես պատմական հուշարձան<sup>46</sup>:

Հայտնի է նաև, որ 1726 թ. դեպի Ս. Քոմայի բլրի քարքարոտ լանջի վրա հայերը կառուցել են 160 լայն աստիճաններով մի ճանապարհ<sup>47</sup>: 133 աստիճաններով նման մի ճանապարհ էլ հայերը կառուցել են Մալման գյուղի մոտակայքի բլրի վրա: Նույն ժամանակ հայերի ջանքերով կառուցվել են նաև մի շարք այլ շինություններ՝ «այդ քաղաքի աղքատների համար»<sup>48</sup>, որոնք գլուխ բերելու համար հատկապես առատաձեռն է եղել Պետրոս Ոսկանը: Ի դեպ, Ոսկանը մտերիմ կապերի մեջ է գտնվել ոչ միայն Արկոտի Նավարի, այլև Մարաթհների առաջնորդ, հռչակավոր Ռագհոջի Բհոսլեի և շատ այլ հնդիկ խոշոր պետական ու քաղաքական գործիչների հետ: Նավարի մտերիմ բարեկամներն են եղել նաև խոշոր վաճառական Խոշա Գավիթ Սուլթանումը՝ Եահամիր Եահամիրյանի հայրը, և Խոշա Նազար Հակոբջանը: Մեսրոպ Սեթը հրատարակել է հետաքրքիր փաստեր այն մասին, որ այդ բարեկամությունը շարունակվել է նաև Սուլթանումի որդի Եահամիրի և Նավարի միջև: Այսպես է, որ երբ անգլիացիները գրավել են Արկոտը, և Նավարը, փաստորեն, սնանկացել է, նրա հայ բարեկամը, հանդիպումներից մեկի ժամանակ պատռել և Նավարի ոտքերի տակ է շարտել նրա ստորագրած պարտավորմանը: Ի պատասխան դրա, Նավարը Եահամիրյանին է նվիրել Մադրասից ոչ հեռու գտնվող Նուարի գյուղը<sup>49</sup>:

Մադրասի հայ գաղթօջախի ծաղկման ժամանակաշրջանը XVІІІ դարի սկիզբն է՝ կապված Մադրասի տնտեսական վերելքի հետ: Այդ ժամանակ է, որ Մալբարյան ծովափի գրեթե բոլոր վայրերից հայերն սկսեցին կենտրոնանալ Մադրասում, և քանի որ նրանք երբեմնի չբավոր գաղթականները չլին այլևս, ուստի կարողացան կարճ ժամանակում իրենց ձեռքն առնել ծովափի և քաղաքի տնտեսական կյանքի մի շարք ճյուղեր: Ընդհատ է, ինչպես մյուս, այնպես էլ Մադրասի գաղթօջախի հիմնական զանգվածը մնում էր աշխատավոր ժողովուրդը, հատկապես արհեստավորությունը, մասամբ նաև մանր վաճառականությունը, սակայն այստեղ արտակարգ հաջողության հասան հայ խոշոր վաճառականները: Սկզբնաղբյուրները խոսում են այն մասին, որ սկսած 1729 թ., վայելելով Արկոտի Նավարի հովանավորությունը, հայ վաճառական-

<sup>41</sup> H. Lovie, Vestages of Old Madras, London, 1895, vol. I, p. 279.

<sup>42</sup> M. J. Seth, Armenians in India, Calcutta, 1938, p. 687.

<sup>43</sup> Ս. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 185:

<sup>44</sup> M. Seth, նշվ. աշխ., էջ 637:

<sup>45</sup> M. Seth, Armenians in India, p. 687:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 577:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 577—578:

<sup>48</sup> Նույն տեղում:

<sup>49</sup> M. J. Seth, Armenians in India, p. 377—378:

ներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել Եվրոպայից, Իրանից և հատկապես Մանիլայից եկող ապրանքների զգալի մասի առքն ու վաճառքը: Հայերն առևտուր էին կատարում հիանալի սեփական նավերով, «օգտագործելով նաև հոլանդական առևտրանավերը»<sup>50</sup>:

Ինչպես հայտնի է, Մադրասում է ձևավորվել հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության խմբակներից մեկը: Խմբակը կազմավորվել է 1770 թվականներին: Խմբակի գաղափարախոսությունը ձևավորվել է Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի, Հարություն Շմավոնյանի ազատագրական քարոզչություններով: Կան բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրություններ, ուստի ավելորդ ենք համարում այստեղ նորից անդրադառնալ այս հարցին: Միայն համառոտ ասենք, որ այս խմբակն է ստեղծել հայ ազգային-ազատագրական գաղափարախոսությունը պրոպագանդող այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են՝ «Նոր սետրակ որ կոչի Յորդորակ», «Որոգայթ փառաց», «Նոր տետրակ, որ կոչի Նշաւակ», «Հայ-ուս դաշնակցություն պայմանագրի նախագիծը»:

**Р. А. АБРААМЯН—Армяне в Мадрасе.**—Опираясь на вловьнайдежные архивные свидетельства, автор коротко прослеживает историю армянских поселений в Индии начиная с 780 г., когда здесь обосновался и получил большие привилегии на торговлю купец Товма Гана, и кончая расцветом Мадрасской армянской колонии 1770-х годов.

<sup>50</sup> Մինչև այսօր հայագիտության մեջ կար այն սխալ կարծիքը, որ Շահամիր Շահամիրյանը իրր եղել է «խեղճ դերձակ», որը Մադրասում բացել է փոքրիկ մի խանութ, բայց շուտով թողել է ասեղն ու մկրատը և դարձել մարգարտի վաճառական: Մեր ձեռքի տակ այսօր կան Լոնդոնի Բրիտանական թանգարանի ֆոնդերից ստացված բազմաթիվ վավերագրեր, որոնք վկայում են, որ այդ կարծիքը ոչ մի հիմք չունի:

Նա Պարսկաստանում և Հնդկաստանում (հատկապես Մադրասում) բազմաթիվ առևտրատների սեր ու միլիոնների շրջանառություն ունեցող մեծահամրավ հողա Դավիթ Սուլթանումի որդին էր: Հնդ դրում, տասնյակ հազարների հասնող դրամական գործարքներ էր կատարում անգամ Շահամիրի մայրը՝ Աննա Խաթունը: Երիտասարդ Շահամիրը Մադրաս է եկել ոչ թե որպես «խեղճ դերձակ», այլ միլիոնների երիտասարդ ժառանգորդ: